Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> հուլիսի 2024 թվականի N 2200 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵԴՈՆԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վարդան Մակեդոնի Ալթունյանի 2024 թվականի հուլիսի 24-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ Վարդան Մակեդոնի Ալթունյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2024 թվականի հուլիսի 26-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 22-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Մակեդոնի Ալթունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024
x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2199-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԼՈՒՍԻԿ ՀԵՆՐԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈԼԻ ՓՈՂՈՑ № 12 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 127.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Լուսիկ Հենրիկի Դավթյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 3822 տրված 27.06.2023թ.) Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 12 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 127.48(մեկ հարյուր քսանյոթ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Լուսիկ Հենրիկի Դավթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Լուսիկ Հենրիկի Դավթյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 2-ին № 20819 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Լուսիկ Հենրիկի Դավթյանի (ծնված 1971 թվականի մայիսի 9-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 12 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 62.22(վաթսուներկու ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Ճանաչել քաղաքացի Լուսիկ Հենրիկի Դավթյանի և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 12 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 65.26(վաթսունհինգ ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսիկ Հենրիկի Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24.07.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հոկտեմբեր 2024 **թվականի** Ն2198-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ № 9/8 ՀԱՍՑԵԻ 9.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22112023-08-0013 վկայական):

Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18062024-08-0029 վկայական) Ծննդատան փողոցի № 9/8 հասցեի 9.65 (ինն ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի № 148-Ա որոշումը, քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 9-ին № 252 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ծննդատան փողոցի № 9/8 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 9.65 (ինն ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 101460 (մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2197 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՌՈՒԲԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 223.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 150.45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (128.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ռուբեն Դանիելյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 223.6 (երկու հարյուր քսաներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 150.45 (հարյուր հիսուն ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (128.8 (հարյուր քսանութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023D3AXFU ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ռուբեն Դանիելյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 223.6 (երկու հարյուր քսաներեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 150.45 (հարյուր հիսուն ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (128.8 (հարյուր քսանութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Տիգրան Արթուրի Կիրակոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

24.07.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունիսի 2024 թվականի N 2196-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 303.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 86.22 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (68.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 303.6 (երեք հարյուր երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 86.22 (ութսունվեց ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (68.8 (վաթսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023NUL4YC ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 303.6 (երեք հարյուր երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 86.22 (ութսունվեց ամբողջ քսաներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (68.8 (վաթսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ջեմս Ռազմիկի Մինասյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունիսի 2024 **թվականի** N2195Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՍԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 516.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 156.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (130.19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վասիլյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 516.67 (հինգ հարյուր տասնվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 156.86 (հարյուր հիսունվեց ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (130.19 (հարյուր երեսուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023YBMKRQ ծածկագրով մուտքագրման տեղեկանքը `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Վասիլյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 516.67 (հինգ հարյուր տասնվեց ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 156.86 (հարյուր հիսունվեց ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (130.19 (հարյուր երեսուն ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Վլադիմիրի Հովհաննիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

25.07.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ` Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 թվականի N2194-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՎՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 129.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 129.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (104.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 129.1 (հարյուր քսանինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 129.1 (հարյուր քսանինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (104.6 (հարյուր չորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 20238DFVRY ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Սավոյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 129.1 (հարյուր քսանինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 129.1 (հարյուր քսանինն ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (104.6 (հարյուր չորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Ռուզաննա Պարույրի Գևորգյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» մայիսի 2024 թվականի N2193 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 214.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 144.29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (110.45 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Արագած 6-րդ թաղամասում ինքնակամ զբաղեցրած 214.5 (երկու հարյուր տասնչորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 144.29 (հարյուր քառասունչորս ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (110.45 (հարյուր տաս ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 20236P9VQP ծածկագրով մուտքագրման տեղեկանքը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Արագած 6-րդ թաղամասում ինքնակամ զբաղեցրած 214.5 (երկու հարյուր տասնչորս ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 144.29 (հարյուր քառասունչորս ամբողջ քսանինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (110.45 (հարյուր տաս ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի
Կարինե Ենոքի Սարգսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N2192Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՅՈՒԴՎԻԳ ԳԱԲՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 5/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Լյուդվիգ Գաբոյանի 2024 թվականի հուլիսի 17-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 22-ին 12340 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Լյուդվիգ Գաբոյանին Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ 5/9 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 3 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հուլիսի 17- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Լյուդվիգ Գաբոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2191-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԹԵԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով Ա/Ձ Նաթելլա Մկրտչյանի 2024 թվականի հուլիսի 04-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 12-ին 12343 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել Ա/Ձ Նաթելլա Մկրտչյանին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովա 1/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդային վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.5 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հուլիսի 01- ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Նաթելլա Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2190 Ա

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի 2024 թվականի հուլիսի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 22-ին 12354 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Գ. Նժդեհ 1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ) ընդհանուր 18 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի հուլիսի 15- ից մինչև 2025 թվականի հունվարի 14-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» հոկտեմբեր 2024 թվականի №2169.Ա

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱՌՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ, ԳԵՎՈՐԳ, ՕՆԻԿ, ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒԹԱՖՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 10 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գառնիկ Մարտիրոսյանի լիազորված անձ Կարեն Կարապետյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №12272 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացիներ Գառնիկ Մարտիրոսյանին և Տիգրան, Գևորգ, Օնիկ, Սուսաննա Մութաֆյաններին պատկանող Գյումրի քաղաք, Շահումյան փողոց, 1-ին նրբանցք, 10 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Ռուսթավելու փողոց, 2-րդ նրբանցք, 7/1 բնակելի տուն

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2188Ա

<<ԷՅԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 9, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ 46 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013թ. նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և, հիմք ընդունելով <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի 2024 թվականի հուլիսի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 22-ին 12355 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ին Գյումրի քաղաքի Պ. Սևակ 9, Տ. Մեծ 46 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (պաստառ)՝ որպես սոցիալական գովազդ, ընդհանուր 36 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2024 թվականի օգոստոսի 01- ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Էյթիէլ սերվիսիս>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<__24__>>__հուլիսի__2024 թվականի N__2187__-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Հովհաննեսի Բադալյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Հովհաննեսի Բադալյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 24 >> հոկտեմբերի 2024 թվականի N 2186 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐԻԻ Ա. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԽՈՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Խորեն Գուրգենի Վարդանյանի 2024 թվականի հուլիսի 23-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրիի Ա.Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խորեն Գուրգենի Վարդանյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի հուլիսի 30-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2024 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 9-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Խորեն Գուրգենի Վարդանյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դասատու Սուսաննա Կոլյայի Զոհրաբյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խորեն Գուրգենի Վարդանյանին և Սուսաննա Կոլյայի Զոհրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա.Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունիսի 2024 թվականի N2135 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 618-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 4782-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 28-ի N 4782-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04/03/2024 թվականի N Կ-04032024-08-0160 որոշում): Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 28-ի <<Գյումրի քաղաքի Շահումյան փող. հարևանությամբ բնակելի տան և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցված 328,45 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 4782-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) վերնագրում, որոշման 1-ին կետում <<328,45(երեք հարյուր քսանութ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական>> թիվը և բառերը փոխարինել <<305,43(երեք հարյուր հինգ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<Ալեքսան>> բառից հետո լրացնել <<Կարապետի>> բառը:
2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 28-ի N 4782-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին>> 2024 թվականի փետրվարի 28-ի N 618-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի
2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2024 **թվականի** N 2184-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/20 ՀԱՍՑԵԻ 82,61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/20 ՀԱՍՑԵԻ 63,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/20 հասցեի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընհանուր իրավասության դատարանի վճիռ՝քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/0595/02/22):

Քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/20 հասցեի 82,61 (ութսուներկու ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխելու և 63,5 (վաթսուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» ,հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի N 2988-Ա որոշումը և քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 26-ին N 10998 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/20 հասցեի 82,61 (ութսուներկու ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/20 հասցեի 63,5 (վաթսուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2024 **թվականի** N 2183-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/21 ՀԱՍՑԵԻ 43,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/21 ՀԱՍՑԵԻ 33,12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/21 հասցեի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընհանուր իրավասության դատարանի վճիռ՝քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/0595/02/22):

Քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/21 հասցեի 43,48 (քառասուներեք ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխելու և 33,12 (երեսուներեք ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ինN 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» , հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի N 2988-Ա որոշումը և քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 26-ին N 10998 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/21 հասցեի 43,48 (քառասուներեք ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/21 հասցեի 33,12 (երեսուներեք ամբողջ տասներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 24.07.2024

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» հոկտեմբերի 2024 **թվականի** N2182-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ № 9/9 ՀԱՍՑԵԻ 42.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22112023-08-0013 վկայական):

Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20052024-08-0012 վկայական) Ծննդատան փողոցի № 9/9 հասցեի 42.21 (քառասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի № 149-Ա որոշումը, քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 9-ին № 252 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ծննդատան փողոցի № 9/9 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 42.21 (քառասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 443795 (չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.07.2024

2024թ. ք.Գյումրի **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» մայիսի 2024 **թվականի** N2181-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/22 ՀԱՍՑԵԻ 3,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ N 17/22 ՀԱՍՑԵԻ 3,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/22 հասցեի տարածքը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընհանուր իրավասության դատարանի վճիռ՝քաղաքացիական գործ թիվ ՇԴ3/0595/02/22):

Քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/22 հասցեի 3,6 (երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատումից բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխելու և 3,6 (երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես աստիճանահարթակ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-իN 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» , հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի N 2988-Ա որոշումը և քաղաքացի Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 26-ին N 10998 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց Գարեգին Նժդեհի փողոց 17/22 հասցեի 3,6 (երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց 17/22 հասցեի 3,6 (երեք ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես աստիճանահարթակ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Սմբատ Սաղաթելի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հոկտեմբեր 2024 **թվականի** N2180-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ԳՐԻՇԱՅԻ ՇԱՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂՅՈՒՍԻ ՓՈՂՈՑ N 105 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 138.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (100.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գայանե Գրիշայի Շարոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N 105 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 138.04 (հարյուր երեսունութ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (100.35 (հարյուր ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Քաղաքացի Գայանե Գրիշայի Շարոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Գայանե Գրիշայի Շարոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Աղյուսի փողոց N 105 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 138.04 (հարյուր երեսունութ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (100.35 (հարյուր ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 230940/երկու հարյուր երեսուն հազար ինը հարյուր քառասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Գրիշայի Շարոյանի պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2024թ. ք.Գյումրի

Վ.ԱՄԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
